



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6735

28

G-57



~~28~~

~~Է-53~~

2

Ն. ՆՅԱԼԻՆԻ

ԻՆՉ Է ՃՇՄԱՐՏԱԻԹԻՒՆԸ



Թարգմ.

ՄԱՄԱՐԷ ՎԱՐՎԱՊԵՏ



200

343-ՆՆ

Վ.Ս.ՂԱՐՇՍՊԵՏ

արան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1903

200 ար 591

22 NOV 2009  
343-26

343-26

Ն. ՆՆՊԼԻՆԻ

28  
Ն-57

# ԻՆՉ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ



Թարգմ.

ՄԱՍԻՔԷ ԳԱՐԵԱՊԵՏ

19261



ԳԱՂԱՐՇԱՊԵՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1903

6735

11.07.2013

ԻՆՉՊԷՍ ՊԵՏՔ Է ԱՊՐԵԼ

Մարդու յեղյեղուկ մտածողութեանց  
յողնեցուցիչ բազմազանութեան մէջ կայ մի  
ճշմարտութիւն, որ ամէնքը ընդունում են  
և առանց որի միտք, նպատակ և կեանք  
չկայ: Այդ ճշմարտութիւնը, որ նոյն իսկ  
բացասութեան ամենամուլեռանդ ողին չի  
կարող ժխտել, մարդու բանական արարած  
լինելն է:

Ընդունելով մեր բանական լինելը, չենք  
կարող չընդունել, որ կարող և պարտաւոր  
ենք բանական կեանք վարել: Եւ ահա մեր  
առաջ ծագում է՝ ինչպէս պէտք է ապրել—  
անխուսափելի և օրհասական հարցը:

Ամեն ժամանակներում մարդս զբաղ-  
ուել է, և չէր կարող չզբաղուել, այդ հար-  
ցով: Բանական մարդը, որ ազատ է անօ-  
րինելու իւր կեանքը, չի կարող չտալ իրան  
այդ հարցը իւր բանական և ազատ գոյու-

Дозволено Цензурою 23 Октб. 1903 г. г. Тифлисъ

Թեան ամեն մի վայրկեանում: Ներկայումս, երբ մարդկութիւնը յանուն բանականութեան հրաժարում է դարաւոր հաւատալիքներից և յանուն ազատութեան գրգռեցնում է հինաւուրց հաստատութեանց հիմքերը, այդ հարցը մեր առաջ է ելնում աւելի սպառնական կերպով, քան երբեիցէ:

Ո՛վ բանական և ազատ մաշդ, ասն, ինչպէս պէտք է ապրել: Վայ քեզ, եթէ դու չես վճռել այդ հարցը: Եթէ դու կեանքի բանական նպատակ չունիս, քո կեանքը չի կարող բանական լինել: Խեղճ բանական արարած, բանականութիւնդ կը թունաւորէ քո գոյութիւնը՝ մերկացնելով աննպատակ և ոչ բանական կեանքիդ խրաքանչիւր քայլափոխի այլանդակութիւնը: Խեղճ ազատ մարդ, պատահական հանգամանքների, մտքի տատանման, բուռն կրքերի արհամարհելի ստրուկ: Մարդկութիւնն ամէնից բարձր է դասում իւր բանականութիւնը: Ինձ թուում է թէ՛ ժամանակ է համոզուելու, որ բանականութիւնը երկսայրի սուր է: Մենք կամենում ենք օգտուել մեր ազատութիւնից:

ժամանակ է հասկանալու, որ այդ էլ երկսայրի սուր է. ազատութիւնը անխուսափելի կերպով մեզ դէպի սոսր կրքերի ստրկութիւնը կը տանէ, եթէ մենք ազատաբար չընտրենք բարձր և բանական նպատակներ:

Հետեւապէս, եթէ չենք կամենում հրաժարուել մեր բանական արարած լինելու իրաւունքից, պէտք է վճռենք՝ ինչպէս պէտք է ապրել — օրհասական հարցը: Գա պարտաւորի վերացական մի հարց չէ, այլ կենսական հարց, առանց որի չենք կարող բանական կեանք ունենալ: Ոչ մի գիտութիւն այդ հարցին պատասխան տալ չի կարող: Այդ հարցը վճռելու համար պէտք է պատասխան տալ մի շարք իրար հետ շաղկապուած նոյնքան օրհասական, նոյնքան կենսական ուրիշ հարցերի, որոնք ի միասին ընդգրկում են գոյութեան մեծ խորհուրդը:

Չի կարելի վճռել ինչպէս ապրելու հարցը, կեանքի վերջնական նպատակը չգիտենալով, չի կարելի վճռել կեանքի վերջնական նպատակի հարցը, երկրային կեանքի նպատակը չհասկանալով, և ահա մենք

կանգնած ենք դէմառդէմ յաւիտենական ճշմարտութեան խորհրդաւոր հարցի առաջ։ Տիեզերական հարցերին ջանում են պատասխանել փիլիսոփաները։ Եթէ նրանք տկարամիտ են, խօսում են բթամտութեանը յատուկ աներես յանդգնութեամբ. եթէ հանճարեղ են, համեստութեամբ առաջարկում են իրենց ենթադրութիւնները, մտածելով որպէս Պլատոնը. «Մենք կըսպասենք նորան, լինի դա Աստուած կամ Աստուծուց ներշնչուած մարդ, որ մեզ կուսուցանէ... և կըբանայ մեր աչքերի կապը»։

Յանուն Աստուծոյ պատասխանում են այդ հարցերին կրօնների հիմնադիրները։

Այդ հարցերի պատասխանը աշխարհ բերաւ բարձրագոյն բանականութեան լուսով ամբողջովին լուսաւորուած՝ «Այս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ», մեր Տէր Յիսուս Քրիստոս։

Քանի դեռ մարդիկ հաւատում են, ընդունում են որիէ կրօն, նորա պատասխան ունին «ինչպէս պէտք է ապրել» հարցին։ Հէնց որ մարդ հրաժարուում է հաւատալու

ի վերուստ եղած յայտնութեանը, դրանով նա հրաժարւում է բանականորէն բացարձակ ճշմարտութիւնը որոնելու, ևս առաւել երկրաւոր կեանքի ու նորա վերջնական նպատակի հարցերին պատասխանելու հնարաւորութիւնից, որով կորցնում է իւր ոտի տակի հողը՝ «ինչպէս պէտք է ապրել» հարցը վճռելու համար։ Լինի նա տղէտ մարդ, թէ մի մեծ փիլիսոփայ, այդ միեւնոյն է. նա անխուսափելի կերպով խորասուզւում է հակառակ ենթադրութիւնների քառսի մէջ և նորա ամբողջ կեանքը դառնում է անմիտ սովորութիւնների և նոյնչափ անմիտ հրապոյրների խայտաճամուկ մի խառնուրդ։

Այս չէ՛ արդեօք ժամանակակից մարդու կութեան ծանր դրութեան գլխաւոր պատճառը։ Ոմանք հրաժարւում են հաւատից գիտակցաբար, իբր յանուն բանականութեան. ոմանք չեն գիտակցում իրենց անկումը, ճշմարիտ հաւատը և ըստ հաւատոյ կեանքը փոխարինելով սնահաւատութեամբ և բարեպաշտութեան արտաքին սովորութիւններով։ Դոցա բոլորի համար բացարձակ



ճշմարտութիւն գոյութիւն չունի, բանական կեանք անհնար է:

Միմիայն նորա համար բացարձակ ճշմարտութիւն կայ և բանական կեանք վարել հնարաւոր է, ով հեղութեամբ ընդունում է Աստուածային Յայտնութիւնը՝ նուիրելով իւր բանականութեան բոլոր ոյժերը հասկանալու համար մեռցնող գրի տակ թաքնուած կենդանարար հոգին: Իսկ ով գոռոզաբար, յանուն բանականութեան հրաժարւում է հաւատալուց, նորա համար բացարձակ ճշմարտութիւն գոյութիւն չունի, նա բանական կեանք վարել չի կարող:

Ի՞նչ է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Այն ըրողէից, երբ առաջին անգամ գիտակցում ենք մեր բանական և ազատ լինելը, մեր մէջ ծագում են հետեւեալ հարցերը. ինչպէս պէտք է ապրել և ինչ է ճշմարտութիւնը:

Շատերը կարծում են, որ բացարձակ ճշմարտութեան հարցը մի այնպիսի փիլիսոփայական վերացականութիւն է, որով զբաղուել կարող են միմիայն վերացական մտածողութեան մառախլապատ շրջաններում սաւառնող մարդիկ, և որ կեանքի մարդու համար ոչ միայն դիւրին է զանց անել այդ հարցը, այլ նոյն իսկ անվայելուչ և ծիծաղելի է դորանով զբաղուելը:

Յամենայն դէպս, անկախ այն բանից, թէ մենք ինչպէս ենք վերաբերւում այդ հարցերին, դրանք դրուած են մեր առաջ, և առանց վճռելու այդ տիեզերական հարցերը, մենք չենք կարող մի բանական քայլ անել, մի բանական խօսք ասել:

«Ի՞նչ է ճշմարտութիւնը»: Այս հարցով Պիղատոսը ընդհատեց իւր խօսակցութիւնը Քրիստոսի հետ, չսպասելով պատասխանի: Այդ հարցը իսկապէս հարց չէր, այլ համոզուած սկեպտիկի մի բացականչութիւն: Պիղատոսը այն աստիճան հաւատացած էր, թէ ոչ ոք չի կարող այդ հարցին պատասխանել, որ նորա մաքոյն անգամ չէր կարող

անցնել պատասխանելու միջոց տալ Քրիստոսին: Դա մի արհամարհական բացականչութիւն էր դէպի այդ, իւր աչքում, հասարակ հրէան, որ խօսում էր մի հարցի մասին, որ չարաչար կերպով զբաղեցրել էր ամբողջ շարք փիլիսոփաների մտքեր և մնացել դարձեալ իբրև մի անլուծելի և խորհրդաւոր հանելուկ:

Բացարձակ ճշմարտութիւնն է միմիայն ճշմարտութիւն. յարաբերական ճշմարտութիւն չկայ և չի էլ կարող լինել: Համանել բացարձակ ճշմարտութեան ճանաչողութեան ինքնուրոյնաբար, այն ենթադրութիւնների օգնութեամբ, որոնք ծագում են մարդու սահմանափակ մտքում զգայարանքների խաբուսիկ գործունէութեան շնորհիւ, անհնար է:

Բացարձակ ճշմարտութեան ճանաչողութիւնը մարդուն տալ կարող է միմիայն Աստուած: Խլեցէք մարդուց առ Աստուած ունեցած հաւատը, բացարձակ ճշմարտութեան գաղափարը նորա համար ամբողջովին կը կորցնէ իւր նշանակութիւնը: Նոյն իսկ հաւատալով Աստուծոյ գոյութեանը, բայց

չընդունելով, որ երկրի վերայ տեղի է ունեցել Աստուածային Յայտնութիւնը, որ Աստուած ուսուցել է մարդկանց գոյութեան բացարձակ ճշմարտութիւնը, չի կարելի ընդունել, որ այդ ճշմարտութիւնը յայտնի է երկրի վերայ:

Պիղատոսը Քրիստոսին Աստուած չճանաչելով, չէր կարող սպասել Նորանից իւր տուած հարցի պատասխանը. չէր կարող նաև ընդունել բացարձակ ճշմարտութիւնը ճանաչելու հնարաւորութիւնը երկրի վերայ:

Մենք, քրիստոնեաներս, Քրիստոսին Աստուած ենք ճանաչունմ. սակայն և այնպէս մեզնից շատերը ընդունակ են կրկնելու հեթանոս Պիղատոսի հարցը նոյն իսկ մտքով, որով նա առաջարկեց՝ որպէս արհամարհական ցաւակցութիւն այդ անլուծելի հարցով զբաղուողին, որպէս խոր համոզմունք, որ այդ հարցը լուծել անկարելի է:

Չեմ խօսում այլևս նրանց մասին, որոնք գիտակցաբար հրաժարուել են Քրիստոսից և քրիստոնէի անունը կրում են միմիայն այն պատճառով, որ օրէնքը կամ

գործնական կեանքի իմաստութիւնը այդպէս է պահանջում: Չընդունելով Քրիստոսին, չհաւատալով Աստուածային Յայտնութեանը, ժխտելով, գուցէ, նոյն իսկ Աստուծոյ գոյութիւնը, այդ քաղաքագէտ—քրիստոնեաները Պիղատոսի հետ միասին անհրաժեշտաբար պէտք է ժխտեն նաև ճշմարտութիւնը ճանաչելու կարելիութիւնը: Խօսքս հաւատից անգիտակցաբար հեռացածների մասին է, որոնք ըստ սովորութեան շարունակում են իրենց հաւատացեալ համարել, արտաքին պաշտամունքի ծէսերը կատարել, մինչդեռ կենդանի հաւատը վաղուց մարել է նրանց մէջ՝ մարել է մինչ այն աստիճան, որ ճշմարտութիւնը չհասկանալու ինդրում նորա հաւասարուել են հեթանոս Պիղատոսին. մարել է մինչ այն աստիճան, որ այլևս անկարող են քրիստոնէաբար մտածել, զգալ, և նրանց կեանքի իւրաքանչիւր քայլափոխը ծառայում է որպէս ապացոյց Քրիստոսի տուած ճշմարտութիւնից լռելեայն հրաժարուելուն: Չկայ և չի էլ կարող լինել յարաբերական հաւատ: Յարաբերական ճշ-

մարտութիւն, յարաբերական հաւատ խօսքերը ամենևին միտք չունին: Կայ միմիայն բացարձակ ճշմարտութիւն կամ բոլորովին չկայ. կայ միմիայն բացարձակ հաւատ կամ բոլորովին չկայ: Յարաբերական ճշմարտութիւն, յարաբերական հաւատ խօսքերով մենք ասած ենք լինում թէ ճշմարտութեան հետ խառն է և ստութիւն, թէ հաւատի հետ խառն է և կասկածանք: Մեծ մասամբ միմիայն խաբում ենք մեզ, ծածկելով երեսխայսբար վարագոյրի ետև մեզ համար անխորժ այն գիտակցութիւնը՝ թէ մենք ճշմարտութիւն չենք ճանաչում, թէ մենք հաւատ չունինք:

Չի կարելի հաւատալ Քրիստոսին և չխօստովանել, որ Նա աշխարհ բերաւ բացարձակ ճշմարտութիւնը, բացարձակ լոյսը երկնաւոր լոյսից, Աստուածային յաւիտենական արդարութիւնը՝ որ ճշմարիտ և սուրբ են Նորա խօսքերը, «Բայց ես յայդ իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն» (Յով. ԺԸ, 37.)  
«Սներբ արա զնոսս ճշմարտութեամբ քով»



զի քո բանդ ճշմարտութիւն է» (Յով. Ժէ, 17.)։ «Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նորա սրբեալք ճշմարտութեամբ» (Յով. Ժէ, 19.)։ «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք» (Յով. ԺԴ, 6.)։ Բանական արարածը՝ ընդունելով որ Քրիստոս աշխարհ բերաւ բացարձակ ճշմարտութիւնը, չի կարող չաշխատել հասկանալու այդ ճշմարտութիւնը՝ աչք ունենալ և չուզենալ տեսնել, ականջ ունենալ և չկամենալ լսել։ Բանական արարածը հասկանալով բացարձակ ճշմարտութիւնը, չի կարող չուզենալ ապրել բանականօրէն, չկամենալ համաձայնեցնել իւր միտքը, զգացմունքը և կեանքի ամբողջ ընթացքը այդ ճշմարտութեան հետ։

Եթէ մեր միտքը, զգացմունքը, մեր կեանքի ամբողջ ընթացքը մի անընդհատ բացասութիւն, մի բողոքող հակասութիւն է Քրիստոսի տուած ճշմարտութեան նկատմամբ, մենք մեղ չխաբենք մի ինչ որ յարաբերական, թոյլ հաւատի առարկութեամբ։ Կարելի է միմիայն հաւատալ կամ չհաւա-

տալ։ Եթէ մենք բացարձակ հաւատ չունինք, մենք չենք հաւատում Քրիստոսին։ Նա ասում է. «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք»։ Եթէ մենք ընդունակ ենք հեթանոս Պիղատոսի հետ միասին կասկածաբար հարցնելու. «Զինչ է ճշմարտութիւն», Քրիստոսի ցոյց տուած ճանապարհից յամառաբար չեղուելով, եթէ ընդունակ ենք կարծելու, որ մեր կեանքը նորա վարդապետութեան հետ համաձայնեցնել անհնարին է, — նշանակում է, որ մենք չենք հաւատում Քրիստոսին, որ մեր մէջ ոչ մի յարաբերական հաւատ չկայ, այլ միմիայն բացարձակ անհաւատութիւն, որը մենք վախենում ենք խօսքով արտայայտել, գուցէ և, մեր վախկոտ սնահաւատութեան պատճառով, վախենում ենք խոստովանել նոյն իսկ մեր հոգու խորքում։

Հետեւապէս, ով չի հաւատում Աստուածային Յայտնութեան, նա չի կարող բանականօրէն որոնել բացարձակ ճշմարտութեան գիտութիւնը. ով հաւատում է Քրիստոսին, խոստովանում է նորա կենդանի

Աստուծոյ Որդի լինելը, չի կարող չխոստովանել Նորա վարդապետութեան բացարձակ ճշմարտութիւնը: Մենք անպատճառ պէտք է ընտրենք երկուսից մէկը. հաւատալ Քրիստոսին, երկիւղածութեամբ ընդունել Նորանից Աստուածային կամքի արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնը և նուիրել մեր բոլոր մտաւոր, բարոյական և նիւթական ուժերը բանականօրէն համաձայնեցնելու մեր կեանքը հաւատի հետ, կամ հրաժարուել Քրիստոսին հաւատալուց, չընդունել Աստուածային Յայտնութիւնը, հրաժարուել բացարձակ ճշմարտութիւնը ճանաչելու հնարաւորութիւնից, հրաժարուել նաև բանականօրէն գոյութիւն ունենալու կարելիութիւնից, մատնուել յուսահատութեան կամ աննպատակ անեցման՝ խեղդելով տիեզերական արդարութեան և կեանքի նպատակի բացարձակ անհասկացողութեան սոսկալի դիտակցութիւնը աննպատակ և ունայն դբադմունքներով կամ խայտաճամուկ զուարճութիւնների արբեցութեամբ: Մենք ծնուել ենք քրիստոնեայ երկրում. մենք ունինք մի

գիրք, որ, ըստ պաշտօնական խոստովանութեան, պարունակում է իւր մէջ բացարձակ ճշմարտութեան գանձը, Աստուածային Յայտնութեան լոյսը և պէտք է ծառայէ որպէս հիմք մասնաւոր, հասարակական և պետական կեանքի. այդ գիրքը Աստուածաշունչն է: Գիտե՛նք արդեօք Նորա բովանդակութիւնը: Զգտո՛ւմ ենք արդեօք համաձայնեցնել մեր կեանքը նրա հետ, որ իբրև Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութիւն ենք ընդունում: Եթէ նրա մէջ է իսկապէս բացարձակ ճշմարտութիւնը, չէ՞ որ նա մի լոյս է կեանքի խաւարի մէջ, գոյութեան նպատակի մեծ յայտնութիւն, բանական կեանք վարելու ճշմարիտ ուղեցոյց: Ո՞վ կեանքի խորհրդաւոր և սուրբ գիրք, արդեօք լսւ ենք իւրացրել քս կենարար բովանդակութիւնը. կո՞նք արդեօք բանական հիմքեր դէպի քեզ ունեցած մեր անտարբերութեան համար, թէ՞ մենք կենդանի ջրի, բացարձակ ճշմարտութեան ուրիշ աղբիւր ենք գտել, թէ՞ մեզ պատել է չհաւատացող մարդու աննպատակ կեանքի քնէած ան-

1004  
67661

տարբերութիւնը, որի համար աւելի դիւրին է, անտես առնելով Աստուածաշունչը, հեղնաբար կրկնել հեթանոս Պիղատոսի հեռ. «Զինչ է ճշմարտութիւն»:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ

Գոյութեան բացարձակ ճշմարտութիւնը իմանալ կարող է միայն Աստուած: Աստուածային արդարութեան բացարձակ ճշմարտութիւնը մարդկութեանը յայտնել կարող է միմիայն Աստուծոյ խօսքը, Աստուածային Յայտնութիւնը:

Ինչպիսի Աստուածային խօսքի ճշմարտութիւնը ունեցած հաւատն է միմիայն, որ կարող է հնարաւորութիւն տալ մարդկութեանը բանականօրէն դատելու և բանական կեանք վաշելու:

Ով որ չի հաւատում Աստուծուն, առաւել ևս Աստուածային Յայտնութեանը, չի կարող երազել բացարձակ ճշմարտութիւնը

ճանաչելու և բանական կեանք վարելու հնարաւորութեան մասին:

Գարեբէ ի վեր ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը պաշտօնապէս ընդունում է քրիստոնէական աշխարհահայեացքը, ընդունում է, որ Աստուածաշունչը կեանքի Գիրքն է, որ նրա մէջ մարդկային լեզուով Աստուծոյ խօսքն է արտայայտուած, և այդ խօսքն է տալիս մարդկութեանը գոյութեան բացարձակ ճշմարտութեան, երկրային կեանքի նպատակի և բանականօրէն ապրելու գիտութիւնը:

Այժմ, երբ մարդկութիւնը, պաշտօնապէս քրիստոնէայ համարուելով, կեանքի մէջ բանականութեան գոյող հաւատն է գաւառում, Սուրբ Գրքին դիտակցաբար վերաբերուելը կենսական անհրաժեշտութիւն է, ինչպէս հաւատացողների, նայնպէս և չհատացողների համար, առանց որի անհնար է բանականօրէն մի քայլ անել:

Ս. Գրքի նկատմամբ ամբողջ մարդկութիւնը բաժանւում է երկուօրի՝ հաւատացողների և չհաւատացողների:

Ով որ հաւատում է, նա չի կարող չցանկանալ ապրել ըստ հաւատոյ, ծարաւի չլինել Աստուծոյ կամքի գիտութեան, չուզենալ հիմնաւորապէս ուսումնասիրել Աստուծոյ խօսքը. մանաւանդ այժմ, երբ թէ մտքերի և թէ կեանքի մէջ յաւիտենական ճշմարտութիւնը այնչափ խնամքով խառնուած է անցողական ստութեան հետ, երբ ամեն քայլափոխում հարկաւոր է լինում պաշտպանել սրբութիւնը՝ հայհոյութիւնից, ճշմարտութիւնը՝ չարամիտ ծաղրից, միտքը՝ նենգաւոր փորձութիւններից, սիրտը՝ անմաքրութեանց վարակումից:

Նա, «վ կենդանի հաւատ ունի, ամենից առաջ գիտակցում է իւր ոչնչութիւնը, գիտակցում է, որ միմիայն Աստուծոյ խօսքը կարող է ազատ պահել նորա միտքը և սիրտը օրհասական սխալներից, որ յաւիտենական ճշմարտութեան գիտութիւնը իւր համար անհրաժեշտ պահանջ է և դրան հասնելու համար պէտք է ուսումնասիրէ Աստուծոյ խօսքը, առանց որի չի կարելի գիտակցաբար քրիստոնէայ լինել, առանց որի կեանքն ևս

չի կարող բուն մտքով քրիստոնէական լինել:

Եկեղեցին միակ առաջնորդուն է Աստուծոյ արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնը ճանաչելու և կեանքը հաւատի հետ համաձայնեցնելու խնդրում. իսկ հիմնաւորապէս գիտենալ Աստուծոյ խօսքը, և ըստ այնմ ինքնաբերաբար կատարել երկնաւոր Հօր կամքը պարտաւոր է իւրաքանչիւր հաւատացեալ: Ասել թէ՛ Ս. Գիրք ուսումնասիրելը հոգևորականութեան գործն է, իսկ սովորական քրիստոնէան կարող է և բոլորովին չիմանալ նրա բովանդակութիւնը, նոյնքան անհեթեթ կը լինէր, սրբան եթէ մէկն ասէր՝ թէ կարգալ կարողանալը կամ գիտութեան ծանօթ լինելն ուսուցչի գործն է, իսկ աշակերտը կարող է և ոչինչ չիմանալ:

Անկեղծ հաւատացող քրիստոնէան, եթէ գրագէտ է, չի կարող անտարբեր մնալ Աստուծոյ խօսքի նկատմամբ, չի կարող հաշտուել ոչ միայն նորա հետ, որ Ս. Գիրքի բովանդակութիւնը բոլորովին չիմանայ, այլև որ վայրիվերոյ և կցկտուր իմանայ: Ով իրեն հաւատացող քրիստոնէայ է երևակայում և

միևնոյն ժամանակ զբազէս է կամ կրթուած,  
 նորա համար Ս. Գրքի բովանդակութիւնը  
 հիմնաւորապէս չիմանալը նախատինք բերող  
 ազիտութիւն է, Աստուծոյ խօսքի նկատմամբ  
 պախարակելի անտարբերութիւն՝ փայլուն  
 ապացոյց, որ նորա հաւատը մեռած է, հա-  
 ւատ չէ, այլ լոկ խօսք, դիմակ կամ կեղծիք:

Որքան մեծ է այդ տեսակ ինտելիգենտ  
 ազէտների թիւը, որքան յաճախ այդպի-  
 սիները նախատինք են բերում քրիստոնէու-  
 թեանը իրենց ազիտութեամբ անկարող  
 լինելով պատասխանելու ժամանակակից  
 անհաւատների ամենանարգ անհեթեթու-  
 թիւններին: Յաւալի է տեսնել խաւարի և  
 ստութեան տարած այդ անարգ յաղթու-  
 թիւնը լուսոյ և ճշմարտութեան դէմ, մինչ-  
 դեռ Աստուծոյ խօսքի գիտութիւնը զօրու-  
 թիւն կը տար նոցա պաշտպանելու ճշմար-  
 տութիւնը հակառակ ստութեան և լուսա-  
 բանելու խնդիրը երկնաւոր պայծառ լուսով:

Այժմ դառնանք չհաւատացողներին:  
 Դուք չէք քհաւատում, որ Ս. Գիրքը բովան-  
 դակում է իւր մէջ Աստուծոյ խօսքը:

Աստուծոյ արդարութեան յաւիտենական  
 ճշմարտութիւնը, ուստի և հարկաւոր չէք  
 համարում հիմնաւորապէս ուսումնասիրել  
 նրա բովանդակութիւնը: Մերժելով Ս. Գիրքը՝  
 դուք մերժում էք Աստուածային Յայտնու-  
 թիւնը ընդհանրապէս, բայց չէ որ մերժելով  
 Ս. Գրքի Աստուածային ներշնչութիւնը, դուք  
 չէք կարող Աստուծուց ներշնչուած համարել  
 ուրիշ որ և է դիրք: Հետեւապէս, ձեզ համար  
 Աստուածային Յայտնութիւն գոյութիւն չու-  
 նի, աստուածային լուսոյ ոչ մի ճառագայթ  
 չի իջել երկրի վերայ, մարդկութիւնը թող-  
 նուած է ինքն իրեն և պէտք է անկախօրէն  
 տնօրինէ իւր կեանքը՝ առաջնորդ ունենալով  
 միայն սեփական բանականութեան լոյսը:

Երկնային Լոյսից ծագած ճառագայթ  
 դուք չէք տեսնում և ընդում էք, որ ձեզ  
 համար աշխարհային խաւարը լուսաւորող  
 միմիայն ձեր բանականութեան լոյսն է: Ըստ  
 որում միմիայն յանուն բանականութեան  
 ժխտել կարող էք Ս. Գրքի Աստուծուց ներ-  
 շնչուած լինելը: Ձեր բանականութիւնը իւր  
 գործունէութեան ընթացքում յենում է



անձնական փորձի և ձեռնից առաջ ու ձեր ժամանակում ապրող անթիւ մարդկանց փորձերի վերայ, որոնց դուք հաւատ էք ընծայում:

Իսկ ձեր բոլոր գիտութիւնները հիմնուած են ձեր զգայարանքների և բանականութեան անսխալական լինելու հաւատի վերայ, մեծ մասամբ աւելի դէպի ուրիշների զգայարանքների և բանականութեան անօրսխալականութիւնը ունեցած հաւատի վերայ. նոյն հիմքն ունի ձեր առ գիտութիւնն ունեցած հաւատը և ձեր անձնական ինքնավստահութիւնը:

Արդ, Աստուածաշունչը այնպիսի գիրք է, դէպի որը վերաբերուել են ոչ միայն անպայման հաւատով, այլ և երկիւղածութեամբ ու պատկառանքով հազարաւոր մարդիկ. դուք պէտք է հաւատաք նոցա, եթէ ուզում էք հաւատով վերաբերուել դէպի գիտութիւնը, որովհետև սա արդիւնք է նոյն բանականութեան, որ երկիւղածութեամբ խոնարհուել է «Կեանքի Գրքի» առաջ:

Ի՞նչպէս. դուք հաւատով էք վերաբերուում մարդկային բանականութեան, ձեզ ինտելիգենտ էք համարում, գնահատում էք քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը, և հարկաւոր չէք գտնում հիմնաւորապէս ուսումնասիրել այն Գիրքը, որ միլիոնաւոր բանական մարդիկ համարել և համարում են «Աստուծոյ Խօսք», «Կեանքի Գիրք», «Գիրք Գրոց»: Ա՛յն գիրքը, որի հովանու ներքոյ ծլել, աճել և զօրացել է ժամանակակից քաղաքակրթութիւնը, որի ազդեցութիւնը մտքերի և սրտերի վերայ այնքան մեծ է եղել, որ նրանից առաջացած շատ բան ձեր մէջ դուք համարում էք ձեր բնութեան անկողողպտելի մի յատկութիւն: Ա՛յն Գիրքը, որ բոլոր քաղաքակիրթ ազգերը իրենց պատիւ են համարում ընդունել որպէս մարդկային իմաստութեան ամենաբարձր արտայայտութիւն: Եւ այդ գիրքը դուք կամենում էք անտես անել:

Եթէ դուք չէք ուզում ճանաչել կամ ժխտում էք Աստուածային Յայտնութեան հնարաւորութիւնը, ձեզ համար բոլոր իրերի

միակ չափ մնում է մարդկային բանականութիւնը: Միլիոնաւոր մարդկանց բանականութիւնը ճանաչել է և այժմ էլ պաշտօնապէս ճանաչում է Ս. Գիրքը իբրև բացարձակ ճշմարտութեան խօսք:

Եթէ դուք չէք կամենում հրաժարուել բանականութեամբ առաջնորդուելուց, այս դէպքում ևս պէտք է բանականօրէն և գիտակցաբար վարուէք: Ի՞նչպէս էք անում դուք: Ո՛չ թէ միայն հիմնաւորապէս չուսումնասիրելով, այլ նոյն իսկ մտաւորապէս չիմանալով Ս. Գրքի ներքին բովանդակութիւնը, դուք յանուն բանականութեան զարմանալի թեթեւամտութեամբ և երեխայական խիզախութեամբ, ուրիշի խօսքով, մերժում էք բոլոր քաղաքակիրթ ազգերից պաշտօնապէս ընդունուած (ձեր լեզուով խօսելով) փիլիսոփայական աշխարհահայեացքը:

Մերժել այդ աշխարհահայեացքը նշանակում է առաջարկել մարդկութեանը աւելի ճշմարիտ կամ աւելի բարեբար ներդործութիւն ունեցող մէկ ուրիշ աշխարհահայեացք: Իայց ի՞նչ ենք տեսնում: Ս. Գրքի ներ-

քին բովանդակութեան, հետեւապէս և նրա աշխարհահայեացքի մասին իրաւունք են համարում դատողութիւն տալու այնպիսի մարդիկ, որոնք հարկաւոր չեն համարել նախապէս ինքնուրոյն կերպով ծանօթանալու դատողութեան ենթակայ նիւթի հետ: Ս. Գիրքը մերժում են յանուն բանականութեան, և հարկաւոր չեն համարում բանականօրէն և գիտակցաբար վերաբերուելու իրենց արածին:

Ասում են, թէ Ս. Գիրքը հակասում է գիտութեան, և այդ հիման վերայ հաւատալով գիտութեանը, չեն ուզում հաւատալ Ս. Գրքին: Մի՞թէ յերաւի այդ ուզիղ է. ո՞վ ստուգեց այն գիտական ենթադրութեանց ճշտութիւնը, որոնք, իբր թէ, անհաշտելի հակասութիւն են կաղմում Ս. Գրքի նկատմամբ. դոյութիւն ունի՞ արդեօք գիտութեան և յայտնութեան մէջ այն անհամաձայնութիւնը, որն ի միջի այլոց մեր ժամանակակիցներից շատերի դաւանութեան առարկան է դարձած: Այդ հարցերը բանականօրէն լուծելու համար անհրաժեշտ է դարձեալ

Ս. Գրքի հիմնաւոր ուսումնասիրութիւնը, առանց որի այս գէպքում ևս բանականութեան երկրպագուները գիտակցաբար և բանականորէն վարուած չեն լինի:

Դուք սիրում էք կրկնել, որ հին հեթանոսական և նոր ժամանակի փիլիսոփայութեանց մէջ կարելի է գտնել նոյնչափ բարձր և բարոյական հասկացողութիւններ և աւելի կազմակերպուած աշխարհահայեացք, քան Ս. Գիրքն է տալիս: Որպէս զի այդ դատողութիւնը լոկ խօսք չլինի, պէտք է հիմնաւորապէս ճանաչել Ս. Գիրքը և փիլիսոփաների երկերը, համեմատել իրար հետ, և ապա միայն գիտակցաբար դատավճիռ կարդալ: Եթէ դուք հիմնաւորապէս չէք ուսումնասիրել Ս. Գիրքը և փիլիսոփայութիւնը, այդ խնդրում անձեռնհաս էք դատողութիւն տալու:

Դուք չէք հաւատում Աստուածային Յայտնութեանը, բարի, ձեզ համար Ս. Գիրքը մարդկային բանականութեան արդիւնք է. բայց կրկնում ենք, այդ գրքի առաջ երկրազածութեամբ խոնարհուել է միլիոնաւոր

մարդկանց բանականութիւնը 19 դարերի ընթացքում, և այժմ ևս քաղաքակիրթ ազգերը չեն վստահանում մի ուրիշը նորա տեղը գնել: Եւ մարդկային բանականութեան այդ թանկագին յիշատակարանը՝ դձուք, բանականութեան եկրպագուներդ, հարկաւոր չէք համարում հիմնաւորապէս ուսումնասիրել: Մարդկային բանականութեան այդ սրբութեանը դուք գոռոզ անփութութեամբ էք վերաբերում և դրանից յետոյ ձեզ իրաւունք էք համարում խօսելու մարդկային գիտակցութեան և բանականութեան բարձր նշանակութեան մասին՝ առ մարդկութիւնը տածած յարգանքի մասին:

Դուք ասում էք, թէ հոգևորականութիւնը տգէտ է և արատաւոր, թէ կեղեցական ծէսերը հնացել են, թէ քրիստոնէական սկզբունքներն ու քրիստոնեաների կեանքը չեն համապատասխանում միմեանց, թէ յաճախ քրիստոնէութիւնը ի չարն են դարձ գնում: Այդ ասելով դուք կարծում էք, թէ ձեր անհաւատութիւնն ու կրօնական ազիտութիւնը, ձեր գոռոզ անտարբերու-

Թիւնը դէպի Ս. Գրքի բովանդակութիւնը  
և ձեր հակաքրիստոնէական գործունէու-  
թիւնը բաւարար կերպով պաաճառաբանե-  
ցիք:

Մի՛թէ դուք չէք գիտակցում, որ հո-  
գևորականութեան և ժողովրդի ազիտու-  
թեան ու պակասութեանց պատասխանա-  
տուութիւնը միմիայն սյն դէպքում քրիստո-  
նէութեան ու Ս. Գրքի վերայ բարդել կարող  
էիք, եթէ ազիտութիւնն և արատաւորու-  
թիւնը Ս. Գրքի ու քրիստոնէութեան պա-  
հանջը լինէր:

Դուք ինքներդ շարունակ նախատում  
էք քրիստոնեաներին խօսքի և գործի մէջ  
եղած անհամաձայնութեան պաաճառով,  
որով խօստովանում էք թէ ազիտութիւնն  
ու արատաւորութիւնը հակառակ են քրիս-  
տոնէութեան և հաւատով վարած կեանքի:  
Ինչո՞ւ ուրեմն, ազէտ և արատաւոր քրիս-  
տոնեաներին նախատելով անհետեղակա-  
նութեան համար, դուք ինքներդ ո՛չ պակաս  
անհետեղականութեամբ նոցա թերութիւն-  
ները քրիստոնէութեան և Ս. Գրքի վերայ

էք բարդում:

Ո՛վ էլ որ լինիք դուք, հաւատացող թէ  
անհաւատ, ձեզ համար հաւասարապէս պար-  
տաւորական է հիմնաւոր կերպով ծանօթա-  
նալ Ս. Գրքի բովանդակութեանը, եթէ  
ուզում էք գիտակրաբար հաւատալ և ըստ  
հաւատոյ ապրել, կամ գիտակցաբար չհա-  
ւատալ և հրաժարուել Քրիստոսից:

Արդ, ինչ գիտէք դուք Քրիստոսի և  
Նորա վարդապետութեան մասին:

Քրիստոս բարեոյ ամենաբարձր արտա-  
յայտութիւնն եղաւ երկրի վերայ: Դուք չէք  
հաւատում այդ բանին: Յոյց տուէք, նա-  
խապէս Ս. Գիրքը ուսումնասիրելով և Փրկչի  
կեանքի օրինակը իմիտ առնելով, ուրիշ ա-  
ւելի կազմակերպուած և համոզեցուցիչ աշ-  
խարհահայեացք, աւելի բարձր իդէալ, աւելի  
անկաշառ բարոյականութիւն, սուրբ կեանքի  
աւելի բարձր օրինակ: Դուք այդ չէք կարող  
անել, ինչպէս չի կարող հրաժարուել քրիս-  
տոնէութիւնը պաշտօնապէս ընդունելուց  
ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը, չնա-  
յելով իւր մեղսասիրութեան և առ սրբու-

Թիւնն ի սրտէ տածած ատելութեան. չի կարող այն իսկ պատճառով, որ նրան փոխարինող ուրիշ բան չկայ, որ ոչ մի փիլիսոփայական սիստեմ, համեմատած քրիստոնէութեան հետ, չի կարող ընդունուել բանականօրէն որպէս բարձրագոյն բարիք և բարձրագոյն արդարութիւն. իսկ խոստովանել հրապարակաւ իրենց բարւոյ և արդարութեան թշնամի լինելը՝ բանականութեան կեղծ երկրպագուները չեն կամենում: Մինչդեռ չի կարելի սիրել բարին, առանց սիրելու բարւոյ այն բարձրագոյն արտայայտութիւնը, որ մարդկութեանը յայտնուել է— Քրիստոսին:

Եթէ մարդիկ իսկապէս քաղցեալ և ծարաւի լինէին արդարութեան համար, անկեղծօրէն ուզենային աշխատել բարւոյ համար, նրանք անհրաժեշտաբար պիտի դային Քրիստոսի մօտ և գիտակցաբար խոնարհուէին նորա խաչի պատուանդանի առաջ:

Միմիայն գիտակցօրէն ընդունելով Աստուածային Յայանութեան անգին տուրքը, գիտակցօրէն և երկիւղածութեամբ խոնար-

հուելով Քրիստոսի ամենաբարձր իմաստութեան և սրբութեան առաջ, գիտակցաբար և անկեղծօրէն հաւատալով, սիրելով և ըստ հաւատոյ կեանք վարելով՝ մարդկութիւնը քրիստոնէական ազնիւ կեանքի ճանապարհի վերայ ոտք կոխել կարող է:

Մենք սիրում ենք շարունակ բանականութեան և ինքնագիտակցութեան մասին խօսել. բանականօրէն և գիտակցաբար վերաբերուենք, ուրեմն, Ս. Գրքին և քրիստոնէութեանը:

Քրիստոս Լոյս է երկնային Լոյսից՝ աշխարհի Լոյս, որ լուսաւորում է բոլոր դարերն ու ժողովուրդները: Նա Յայանութեան վերջին խօսքն է, միակ վարդապետը բոլորի համար: Քրիստոսից առաջ սուրբ լուսատուները մարդկութիւնը պատրաստում էին նորան ընդունելու, իսկ յետոյ՝ դաստիարակում են մարդկութեանը, որ հետզհետէ Քրիստոսին հասկանան, և պիտի այնքան դաստիարակեն, մինչև երկնքի արքայութեան ամբողջ զանգուածը խմորուի և ճիրով արտի հունձը հասնի:

Մարդկութեան աստիճանաբար դաս-  
տիարակութեան պատմութիւնը և Աստուծոյ  
բերանից ելած կեանքի խօսքերը գրուած են  
Ս. Գրքի էջերում: Բանանք, ուրեմն, կեանքի  
Գիրքը և հաւաստիանանք՝ գիտակցական է  
արդեօք մեր հաւատը, կամ թէ՛ գիտակ-  
ցական է արդեօք մեր անհաւատութիւնը:  
Այն ժամանակ միայն կարող ենք գիտակ-  
ցաբար վճռել այս հարցը. քրիստոնեայ ենք  
մենք, թէ ոչ, և ինչ ենք ուզում լինել՝  
քրիստոնեայ, թէ ոչ քրիստոնեայ: Թող,  
ուրեմն, փարատուի ստութեան խաւարը և  
երևան դան գիտակցական քրիստոնեաներ  
կամ գիտակցական ոչ քրիստոնեաներ:

**ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՄԵՆՔ Ս. ԳՐՔԻՅ**

19-րդ դարի վերջում քրիստոնէի ձեռ-  
քով գրուած մի գրքի մէջ պատահաբար կար-  
դացել եմ հետեւեալ ուշադրութեան արժանի  
խօսքերը. «Յայտնի է, որ ինքը Քրիստոս

չպատասխանեց — ինչ է ճշմարտութիւնը —  
հարցին»:

Այսպիսի համարձակ տգիտութիւն ոչ  
թէ բացառիկ, այլ միանդամայն բնական  
երևոյթ է ժամանակակից ինտելիգենցիայի  
մէջ: Աշխարհի Փրկչի մասին, որ Իւր համար  
ասում էր՝ «Ես եմ՝ ճանապարհ և ճշմար-  
տութիւն և կեանք», «Ես ի դոյն իսկ եկեալ  
եմ յաշխարհ, զի վկայեցից վասն ճշմար-  
տութեանն» — համարձակ կերպով ասել՝ յայտ-  
նի է, որ նա չպատասխանեց «ինչ է ճշմար-  
տութիւնը» հարցին, մինչ նորա ամբողջ  
կեանքը և նորա բերանից ելած ամէն մի  
խօսքը ճշգրիտ պատասխան էր այդ հարցի,  
որով մարդկութեան մեծամասնութիւնը եր-  
բէք անկեղծօրէն չի զբաղուել, — ասել այդ,  
նշանակում է բացարձակապէս յայտարարել,  
որ Քրիստոս չգիտէր ինչ էր ուսուցանում  
և քրիստոնեաները չգիտեն ինչի են հաւա-  
տում:

Այդ բնորոշ դարձուածքը կարող է որո-  
շել ժամանակակից ինտելիգենցիայի անաս-  
ման տգիտութեան չափը կրօնական խնդիր-

ների նկատմամբ: Կրօնական տգիտութեան կողմից հաւատացողներից շատերը մեր լուսաւորեալ դարում կարող են համարձակ ձեռք ձեռքի տալ չհաւատացողների հետ: Գտնել մի մարդ, հիմնաւորապէս ծանօթ Ս. Գրքին, սիրով ուսումնասիրած և սրտով ըմբռնած կենդանարար հոգին, շատ դժուար է:

Շատ քիչ է պատահում, որ Ս. Գիրքն ուսումնասիրեն ինքնուրոյն կերպով: Սովորաբար նորա բովանդակութեանը ծանօթանում են այն մտաւոր բանակի հեղինակաւոր անձանց խօսքերից, որոնց աւելի են համակրում. հաւատացողները՝ գիտնական աստուածաբանների խօսքերից, չհաւատացողները՝ բացասական քննադատութեան հեղինակաւոր ներկայացուցիչների խօսքերից:

Սեր հոգեւոր գրականութեան մէջ չկան այնպիսի ժողովրդական հրատարակութիւններ, որոնց մէջ կարելի լինէր գտնել քրիստոնէական աշխարհահայեացքի լրիւ մեկնութիւն: Իսկ առանց քրիստոնէական աշխարհահայեացքի պարզ հասկացողութեան՝ սրբազան պատմութեան նոյն իսկ ամենամեծ

փաստերը կորցնում են իրենց տեւական, կենսական նշանակութիւնը: Ս. յդ հասկացողութեան բացակայութիւնն ու կրօնական տեղեկութեանց մի ամբողջութիւն կազմելու անհնարաւորութիւնն է, որ առաջացնում է ժամանակակից քրիստոնեայ ազգերի կեանքի մէջ ամենատխուր երևոյթներից մէկը: Կենդանի հաւատի տեղ, որ չի կարող առանց դործի լինել և պէտք է կապուած լինի ըստ հաւատոյ կեանքի հետ, միլիոնաւոր մարդոց համար բռնում է դէպի սրբազան պատմութեան առանձին փաստերն ունեցած անկենդան հաւատը, առանց նոյն իսկ ամենափոքր հասկացողութեան այն ներքին, տեւական և կենսական նշանակութեան մասին, որ այդ փաստերն ունին հաւատացողի անձնական կեանքի համար: Ս. յսպիսի հանդամանքներում, երբ կրօնը հասկանում են սրպէս կոյր հաւատ դէպի սրբազան պատմութեան առանձին փաստերը, զարմանալի չէ որ հաւատի և կեանքի մէջ մեծ վիճ է առաջանում և կրկին շատ կենդանի հաւատ և բարի կամք է հարկաւոր, որ կարելի լինի

այդ վիճի վերայ կամուրջ ձգել։  
 Անհրաժեշտ է, որ պարզ հասկանան թէ  
 կեանքի Գիրքը Աստուծոյ խօսքն է՝ ոչ թէ  
 տեղական և ժամանակաւոր նշանակութիւն  
 ունեցող, այլ համամարդկային և յաւիտե-  
 նական։ Ս. Գրքի այդ ներքին խորհուրդը  
 հասկանալ անկարելի է առանց հասկանալու  
 նորա ընդհանուր աշխարհահայեացքը. իսկ  
 շատերի համար այդ դժուարացնում են  
 պատմական մանրամասնութիւնները, որոնք  
 դարձնում են մարդու ուշադրութիւնը յա-  
 վիտենականից դէպի ժամանակաւորն ու ան-  
 ցողականը։

Քրիստոնէական աշխարհահայեացքի,  
 իդէալի և բարոյականութեան ինքնուրոյն  
 ուսումնասիրութեան միակ աղբիւրը Ս. Գիրքն  
 է։ Դիտենք արդեօք «կեանքի Գրքի» բովան-  
 դակութիւնը այնքան, որ կարողանանք ներ-  
 կայ կեանքի բարդութեանց, մտքի տա-  
 տանման և անսանձ ազատասիրութեան մէջ  
 դիտակցաբար ապրել ըստ հաւատոյ։

Ինձ թւում է, որ անկեղծօրէն հաւատով  
 ապրել ցանկացողներից իւրաքանչիւր ոք կը

խոստովանէ համեստութեամբ, որ իրան  
 յայտնի չէ «կեանքի Գրքի» բովանդակու-  
 թիւնը իբրև մի կաղմակերպուած ամբողջու-  
 թիւն, և որ իւր ունեցած բոլոր կցկաւոր  
 տեղեկութիւնները, աստուածաբանութիւնից  
 և եկեղեցական պատմութիւնից՝ չեն միա-  
 նում և կազմում մի սրոշ աշխարհահայեացք,  
 որոշ իդէալ, բարոյականութեան կաղմակեր-  
 պուած սխտեմ։ ցաւելով կը խոստովանէ և  
 այն, որ չկայ եկեղեցու մի այնպիսի ներ-  
 կայացուցիչ և աստուածաբան հեղինակ, որին  
 կարողանար անպայման հաւատով վերաբե-  
 րուել, կը խոստովանէ հետեւապէս, որ մի  
 ճանապարհ է մնում միայն՝ անկախօրէն  
 ուսումնասիրել կեանքի Գիրքը, եթէ ուզում է  
 ինքնուրոյնաբար ապրել ըստ հաւատոյ։

Ով չէ ընդունում Ս. Գիրքը որպէս  
 Աստուծոյ խօսք, նրա համար Ս. Գիրքը  
 մարդկային բանականութեան արդիւնք է,  
 փիլիսոփայական աշխարհահայեացք, որ պաշ-  
 տօնապէս ընդունուած է բոլոր քաղաքակիրթ  
 ազգերից։ Ես չեմ կարող ենթադրել, որ մի  
 բանական մարդ, ժխտելով Ս. Գրքի աս-



տուածային ներշնչութիւնը, կարողանայ ընդունել որպէս Աստուածային Յայտնութիւն ուրիշ որ և է գիրքը:

Ժխտելով Աստուածային Յայտնութիւնը՝ չհաւատացողը չի կարող մերժել Ս. Գիրքը յանուն բացարձակ ճշմարտութեան: Ընդունով մարդկային բանականութիւնը որպէս բարձրագոյն չափ, չհաւատացողը պէտք է ընդունէ Ս. Գիրքը որպէս արդիւնք մարդկային բանականութեան՝ բոլոր այլ փիլիսոփայական աշխարհահայեացքների շարքում: Եթէ Ս. Գիրքը, որպէս պաշտօնապէս ընդունուած կեանքի հիմք, նորան դիւր չէ գալիս, նա պէտք է հիմնաւորապէս ուսումնասիրէ Ս. Գրքի աշխարհահայեացքը, կրօնական ու բարոյական բովանդակութիւնը, որպէս զի կարողանայ գիտակցաբար ընդունել և ուրիշներին ցոյց տալ որ և է այլ աշխարհահայեացքի, իդէալի և բարոյականութեան առաւելութիւնը նրանից:

Մերժել Ս. Գիրքը որպէս կեանքի հիմք, առանց ցոյց տալու մարդկութեան մի նոր և աւելի լաւ կեանքի հիմք, որ կարելի լի-

նէր գիտակցօրէն գերադասել հնից՝ երեսույական անմտութիւն կը լինէր և պատիւ չէր բերլի ինտելիգենտ, քաղաքակրթուած, բանական լինելու գիտակցութեամբ հպարտ մարդկանց: Նորա ներքին բովանդակութեան անկախօրէն ուսումնասիրութիւնը անպայման անհրաժեշտութիւն է այն բոլոր անձանց համար, լինին հաւատացող կամ չհաւատացող, որոնք ուզում են անկախաբար և բանականօրէն ապրել:

Մի արմատացած նախապաշարմունք է, թէ ամբողջ Ս. Գիրքը սկզբից մինչև վերջ կարգալը ձանձրալի և ապարդիւն աշխատանք է: Այն ինչ Ս. Գիրքը կարգալը ոչ թէ միայն ձանձրալի չէ, այլ և վերին աստիճանի հետաքրքրական է և օգտակար: Կեանքի Գրքի ներքին բովանդակութիւնը չիմանալը քրիստոնեայ ազգերի ինտելիգենտ մարդկանց համար ամօթաբեր տղիտութիւն է, ըստ ուրում հէնց նորա մէջ է գտնուում բանականութեան մատչելի ամենից կազմակերպուած աշխարհահայեացքը, ամենաբարձր իդէալը և ամենակատարեալ բարոյականութիւնը:

Հաւատացեալների համար Ս. Գիրքը  
Կեանքի Գիրք է, Աստուծոյ անսուտ խօսք,  
Կենդանի ջրի անսպառ աղբիւր, նորա մէջ  
բովանդակած Աստուածային արդարութեան  
յաւիտենական ճշմարտութիւնը մշտական և  
ընդհանուր նշանակութիւն ունի բոլոր ժա-  
մանակների և ամբողջ մարդկութեան համար:  
Թէ ո՞վ է եղել Աստուծոյ կամքի գործիք,  
լինչպէս էին անուանում նորան, ո՞վ է ար-  
ժանի եղել յայանելու աշխարհին Աստուծոյ  
այս կամ այն խօսքը, երբ և ինչ առթիւ է  
հնչուել այդ խօսքն ի լուր մարդկութեան,  
այդ բոլորը երկրորդական նշանակութիւն  
ունի մեզ համար: Մեզ հաւատով, սիրով և  
երկնային ուրախութեամբ լցնողը Կեանքի  
Գրքի ներքին ճշմարտութիւնն ու նրա իւ-  
րաքանչիւր խօսքի բանականութեան և սրտի  
համար միանգամայն համոզեցուցիչ լինելն է:

Ուսումնասիրենք, ուրեմն, Ս. Գրքի ներ-  
քին բովանդակութիւնը՝ ստուգելու համար,  
թէ ո՞րքան գիտակցական է մեր ունեցած  
հաւատը, կամ մեր անհաւատութիւնը:

Ի՞նչ Պէ՛Ս Պէ՛ՏԷ Է ԿԱՐԴԱԼ Ս. ԳԻՐՔԸ

Ս.յն հարցը, թէ ինչպէս պէտք է կար-  
գալ և ուսումնասիրել Ս. Գիրքը, նոյնքան  
կարևոր է, որքան՝ իւրաքանչիւր գործի յա-  
ջողութեան համար կարևոր է սկսելուց առաջ  
որոշ ծրագիր կազմելը: Ս.յս խնդրում թէ  
հաւատացողները և թէ չհաւատացողները  
պէտք է գնան միեւնոյն ճանապարհով, եթէ  
ցանկանում են հասնել իրենց գլխաւոր  
նպատակին՝ Ս. Գրքի ընթերցանութեան և  
ուսումնասիրութեան ձեռնարկելով:

Ի՞նչ է ցանկանում հաւատացողը՝ նա  
հաւատում է, որ Կեանքի Գիրքը բովանդա-  
կում է իւր մէջ Աստուածային արդարու-  
թեան յաւիտենական ճշմարտութիւնը. նորա  
գլխաւոր նպատակն է ճանաչել Կենդանի  
Աստուծոյ կամքը իւր յաւիտենական և ան-  
փոփոխ էութեամբ: Նորա համար Աստուա-

ճային Յայտնութիւնը պարունակում է իւր մէջ այն ամենը, ինչ որ ի հօրէ բղխեալ Ս. Հոգին յայտնել է մարդկանց իրենց հոգևոր դաստիարակութեան և յաւիտենական փրկութեան համար, որպէս զի կարողանան ապրել բանականօրէն՝ համաձայն երկնաւոր Հօր կամքի յաւիտենական արդարութեան:

Հաւատացեալի համար, որին Փրկիչը ուսուցել է երկրպագել Աստուծուն հոգևոր և ճշմարտութեամբ, որին յայտնի է Պօղոս առաքեալի ասածը՝ «գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ» (Բ. Կորնթ. Գ. 6), Ս. Գրքի ուսումնասիրութեան գլխաւոր նպատակը պէտք է լինի յայտնութեան յաւիտենական և անփոփոխ հոգու ճանաչողութիւնը՝ զգուշանալով միանգամայն մեռցնող տառին յատուկ հակասութիւններէրից ու կաշկանդանքից:

Այն հարցերը, թէ երբ, ում ձեռքով և ինչ առթիւ է ասուել Աստուծոյ այս կամ այն խօսքը, հաւատացեալի համար, աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութեան նկատմամբ, ոչ մի նշանակութիւն

ունենալ չեն կարող: Նորա համար ամբողջ յայտնութիւնը բղխում է Կենդանարար Աստուծոյ Ս. Հոգուց և մի է իւր ամբողջութեամբ, որպէս անփոփոխ Աստուծոյ անփոփոխ խօսք՝ ունի ընդհանուր և յաւիտենական նշանակութիւն, որպէս Կենդանի Աստուծոյ անսուտ կամք, որպէս Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութեան երկրաւոր արտացոլումն:

Եւ հէնց այդ ներքին էութիւնը, Աստուածային արդարութեան այդ անփոփոխ յաւիտենական ճշմարտութիւնն է յաւիտենական կեանքի խօսքը, կենդանի ջրի աղբիւրը, որ յաւիտեան յագեցնում է հոգևոր ծարաւը՝ կենդանարար հոգին, որ մենք պէտք է ըմբռնենք մեռցնող տառի ներքոյ: Ս. Գիրքը կարգալիս մեր գլխաւոր ջանքը պէտք է լինի շարունակ յիշել, որ յայտնութեան իւրաքանչիւր մի խօսք իւր մէջ բովանդակում է կենդանարար հոգի, որ Կեանքի Գրքի ոչ մի երես չի կարող յարաբերական, տեղական և ժամանակաւոր նշանակութիւն ունեցող մեռեալ տառ լինել, այլ որ այդ տառի ներքոյ

անշուշտ թաքնուած է ընդհանուր և յաւիտենական նշանակութիւն ունեցող կենդանարար հոգի:

Մենք այնքան հակուած ենք ամէն բանի վերայ նայելու երկրաւոր կեանքի և նրա բովանդական շահերի նեղ և ստոր տեսակէտով, որ մեզ համար՝ դիւրութեամբ կամաւոյն մեկնութիւններ կենթարկուող, մեռցնող տառը վտանգաւոր փորձութիւն կարող է լինել՝ ծածկելով իւր տակ կենդանարար հոգին, դիւրութիւն տալով մնալու երկրի վերայ, երբ մեր մէջ ցանկութիւն չկայ վերանալու դէպի Աստուածային արգարութեան յաւիտենական ճշմարտութիւնը: Չանանք բոլոր ուժով պաշտպանել մեզ մեռցնող տառի կաշկանդանքից՝ այն ամէնից, ինչ որ կարող է դարձնել մեր ուշադրութիւնը բացարձակից դէպի յարաբերականը, ընդհանուրից դէպի մասնաւորը, մի խօսքով՝ կենդանարար հոգուց դէպի մեռցնող տառը: Լաւ միտներս պահենք, որ Աստուածային Յայանութիւնը արուած է մարդկութեան նշ թէ նորա հետաքրքրութեանը բաւակա-

նութիւն տալու, այլ նորա համար, որ կարողանայ հասկանալ Աստուածային արգարութեան յաւիտենական ճշմարտութիւնից այն, ինչ որ անհրաժեշտ է երկրաւոր կեանքի խորհուրդը ըմբռնելու և երկրի վերայ Աստուծոյ կամքը բանականօրէն կատարելու համար:

Մեր կողմից մեծ սխալ կը լինէր, եթէ Ս. Գրքի մէջ փնտռէինք այն բոլոր հարցերի լուծումը, որ ծագում են մեր անյազ մտքի հետաքրքրութիւնից: Աստուածային արգարութեան յաւիտենական ճշմարտութիւնից Աստուած յայտնել է մարդկութեան այն, ինչ որ անհրաժեշտ է երկրաւոր կեանքի խորհուրդը հասկանալու և երկրի վերայ Աստուծոյ կամքը բանականօրէն կատարելու համար:

Ս. Գրքի մէջ չպէտք է որոնենք աստղաբաշխութեան, երկրաբանութեան, բնագիտութեան կամ մարդակազմութեան վերաբերեալ այնպիսի հարցերի պատասխան, որոնք ոչ մի նշանակութիւն չունին մարդու երկրային կեանքի խորհուրդը հասկանալու

նկատմամբ, և հաւատացած լինենք, թէ այնտեղ կը գտնենք այդ գիտութեանց վերաբերեալ բոլոր հարցերի պատասխանը, որոնք հարկաւոր են երկրաւոր կեանքի նպատակը հասկանալու և բանականօրէն Աստուծոյ կամքը կատարելու համար:

Ս. Գրքի մէջ չպէտք է որոնենք պատմական անցքերի մանրամասն շարակարգութիւն՝ համաձայն «Ժամանակակից գիտական մտքի» պահանջների, որոնք հիմնուած են աստիճանաբար զարգացման և մարդու հոգևոր կեանքի իւր միջավայրից և շրջապատող հանգամանքներից լիովին կախումն ունենալու տեսութեան վերայ:

Ս. Գրքը, ընդունելով մարդու կամքի ազատութիւնը, շարունակ յիշեցնում է, որ մարդկային կեանքի ուղիղ ընթացքը կախուած է միլիոնաւոր կենդանի, բանական և ազատ էակների անհատական հոգևոր արժանիքից, և ոչ թէ մի տեսակ հասարակական մեքենայի գործունէութիւնից, որ առանց նպատակի, պատահաբար, այս կամ այն երևոյթն է յառաջ բերում: Նա չի մոռանում,

որ Մովսէս ժամանակակից էր միլիոնաւոր ստոր և չնչին մարդկանց, այն ինչ ոչ միջավայրը և ոչ էլ հանգամանքները չկարողացան ստիպել նորան այնպէս զգայ, մտածել և ապրել, ինչպէս ապրում էին նորա ժամանակակից հրէաներն ու եգիպտացիները: Ս. Գրքը չի մոռանում և այն, որ եթէ Սաւուղը կարող է դառնալ Պողոս առաքեալ, հնարաւոր են և այլ հոգևոր կերպարանափոխութիւններ՝ հակառակ հոգու աստիճանաբար զարգացման օրէնքի:

Յիշելով այս բոլորը, մենք հեշտութեամբ կը հասկանանք, որ Ս. Գրքի մէջ այն ամէնը, ինչ որ անանց և յաւիտենական նշանակութիւն ունի՝ կազմում է մի ներդաշնակ ամբողջութիւն, այն է՝ նորա կենդանարար հոգին, և որ Ս. Գրքի այդ կենդանարար հոգու ներդաշնակութիւնը, թարգմանելով 19-րդ դարի ինտելիգենցիայի լեզուով՝ արտայայտում է «Ս. Գրքի աշխարհահայեացք, իրէալ և բարոյականութիւն» խօսքերով:

Ս. Գրքի աշխարհահայեացքը մեզ բացատրում է աշխարհի դոյութեան և մարդու

երկրաւոր կեանքի խորհուրդը՝ մեանդամայն որոշ կերպով պատասխանում է «ինչ է ճշմարտութիւնը» հարցին:

Ս. Գրքի իդէալը կամ առաջնորդող գաղափարը տալիս է մեզ աշխարհի կեանքի նպատակի մասին որոշ հասկացողութիւն և որոշ պատասխան այն հարցին, թէ ինչ է մարդու երկրաւոր կեանքի բանական նպատակը:

Ս. Գրքի բարոյականութիւնը տալիս է մեզ Աստուածային արգարութեան յաւիտեանական ճշմարտութիւնից բղխող կազմակերպուած մի ծրագիր և կատարելապէս որոշ պատասխան այն հարցին՝ թէ ինչպէս պէտք է բանական և մաքուր կեանք վարել:

Իւրաքանչիւր հաւատացող, յուսով եմ, կը համաձայնի, որ այս բոլորը նորա համար կեանքի ինդիւրներ են և որ առանց գիտակցաբար իւրացնելու այդ ամէնը՝ մենք չենք կարող գիտակցական — քրիստոնէական կեանքով ապրել, չենք կարող գիտակցական մի քայլ անգամ անել ժամանակակից աշխարհային կեանքի խառնաշփոթ լաբիրինթոսի մէջ:

Ինչ է ցանկանում չհաւատացողը մտչելով Ս. Գրքի ուսումնասիրութեանը: Նա գիտէ, որ Ս. Գիրքը ճանաչուած է որպէս պետական, հասարակական և մասնաւոր կեանքի հիմք, սուտի և ինքն ոչ մի բանական քայլ չի կարող անել առանց հիմնաւորապէս ուսումնասիրելու պաշտօնապէս իբրև կեանքի հիմք ընդունուած աշխարհահայեացքը, իդէալը և բարոյականութիւնը, թէկուզ հէնց այն նպատակով, որ կարողանայ գիտակցաբար և բանականօրէն կռուել իրերի այդ ընդունուած կարգի դէմ: Նորա համար Ս. Գրքի ներքին էութիւնը միայն նշանակութիւն ունի. հրաժարուելով հաւատալուց յանուն բանականութեան, նա միմիայն յանուն բանականութեան էլ կարող է քննադատել Ս. Գիրքը, որպէս պաշտօնապէս ընդունուած կեանքի հիմք, իսկ Ս. Գրքի մեռցնող տառը նորա համար աւելի պակաս նշանակութիւն ունի, քան հաւատացեալի համար: Հրաժարուելով հաւատալուց յանուն բանականութեան, չհաւատացողը պարտաւոր է ժխտել Ս. Գիրքը նոյնպէս յանուն

բանականութեան, ոչ միայն որպէս Աստուածային յայտնութիւն, այլ և որպէս պաշտօնապէս ընդունուած կեանքի հիմք, և Ս. Գրքի փոխարէն ընդունել գիտակցաբար աւելի լաւը՝ բանականօրէն ապացուցանելով նորա առաւելութիւնը Ս. Գրքից:

Ամէն մի գործ դժուար է, եթէ սէրը չէ լուսաւորում և ջերմացնում: Աստուածային յայտնութիւնը իւր ամբողջութեամբ, որպէս նաև կեանքի իւրաքանչիւր մի խօսքը միանգամայն մատչելի և հասկանալի են նոյն իսկ ամենահասարակ և ոչ դրագէտ մարդկանց, եթէ հաւատը բացել է նոցա հոգու աչքերը և եթէ սէրը հասկանալու ընդունակ է դարձրել նոցա սրտերը: Չհաւաաացողի համար, ընդհակառակը, Ս. Գրքի կենդանարար հոգին ըմբռնելը շատ դժուարութիւններ ունի, որոնց յաղթելու համար հազիւ թէ մէկը բաւականաչափ զօրութիւն և եռանդ ցոյց տայ՝ առանց հաւատացեալի օժանդակութեան:

Այս կերպ մատչելով Ս. Գրքի ուսումնասիրութեան՝ հաւատացողը հնարաւորու-

թիւն կունենայ ստուգելու, թէ սրբան գիտակցական է իւր հաւատը, իսկ չհաւատացողը՝ թէ սրբան գիտակցական է իւր անհաւատութիւնը:

### ՄԵՌՅՆՈՂ, ՏԱՌԸ ԵՒ ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ՀՈԳԻՆ

Այս անցողական աշխարհում ամէն ինչ ժամանակաւոր և պայմանական է. միմիայն մարդկային հոգին է յաւիտենական և ընդունակ ըմբռնելու անանցը, յաւիտենականը՝ կենդանարար հոգին, անցողական ձևի խաբուսիկ քողի ներքոյ:

Մեղանչական մարդկութիւնը աւելի շուտ հակուած է հասկանալու պայմանականն ու ժամանակաւորը, ըմբռնելու ձևն ու տառը, քան Աստուծոյ արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնը և պայմանական ձևի ու մեռցնող տառի ներքոյ թափնուած կենդանարար հոգին:

Աստուածային Յայտնութիւնը, որպէս  
յաւիտենական կեանքի խօսք, մի զօրեղ կոչ է  
պայմանականից և ժամանակաւորից դէպի  
բացարձակ ճշմարտութիւնն ու յաւիտենա-  
կան արդարութիւնը: Ս. Կրքում պատմուած  
բոլոր իրողութիւնները իրենց մէջ պարու-  
նակում են յաւիտենական նշանակութիւն  
ունեցող կենդանարար հոգի. Աստուծոյ բե-  
րանից ելած ամէն մի խօսք կենդանի ջրի  
կաթիլ է, յաւիտենական կենաց ծառի  
պտուղ, բայց որպէս արտայայտութիւն պայ-  
մանական, ժամանակաւոր կեանքի՝ մեռցնող  
տառի պայմանական նշանով ընծայուած:

Նիւթի և մեղքի ստրուկների համար  
դա մի վտանգաւոր փորձութիւն է. նրանց  
համար շատ բնական է երես դարձնել իրենց  
չսիրած բացարձակից և յաւիտենականից,  
որպէս զի միմիայն պայմանականն ու ժա-  
մանակաւորը տեսնեն, որը նրանք սիրում են  
և գերադասում: Աստուծոյ պահանջած բա-  
ցարձակ և յաւիտենական արդարութիւնից,  
նրանց համար շատ բնական է կապուել  
մեռցնող տառի հետ և միանգամայն անտես

անել կենդանարար հոգին:

Մեծ է փորձութիւնը, շատ են նախա-  
զգուշացնողները դորա դէմ: Այդ վտանգից  
մարդկութեանը նախազգուշացրել են հին  
ուխտի մարգարէները, Փրկիչը և Նորա  
առաքեալները: Զգուշացումները շատ որոշ  
և պարզ են, բայց չար կամքը աւելի զօրեղ  
է, և գերակշռող մեծամասնութիւնը շարու-  
նակում է չտեսնել աչքերով, չլսել ականջ-  
ներով և չհասկանալ սրտով:

Ի զուր էին հնչում սրտով անթլիառ  
ժողովրդի համար մարգարէի ահեղ խօսքե-  
րը, թէ ծէսը, ձևը, թլլիատութիւնը ոչ մի  
նշանակութիւն չունին, եթէ սիրտը մաքուր  
չէ. մարդիկ երկիւղածութեամբ կարդում  
էին մարգարէի խօսքերը և շարունակում  
դաւանել կենդանարար հոգուց զուրկ՝ պայ-  
մանական ձևի բացարձակ նշանակութիւնը:

Քրիստոս շարունակ կուռում էր ոչ միայն  
փարիսեցիների, սադուկեցիների, դպիրների,  
այլ նոյն իսկ Իւր աշակերտների այն հակման  
դէմ, որով միշտ աշխատում էին մեռցնող  
տառի չափ նեղ և սահմանափակ նշանա-



կուլթիւն ապ իւր խօսքերին: Նա պարզ ցոյց  
տուեց ծէսի և ձևի երկրորդական նշանա-  
կուլթիւնը, ասելով թէ՛ Աստուծուն պէտք է  
երկրպագել հոգւով և ճշմարտութեամբ. Նա  
ցոյց տուեց նաև տառի երկրորդական նշա-  
նակուլթիւնը, ասելով թէ՛ իւր խօսքերը  
հոգի են և հոգւով էլ պէտք է հասկացուին:

Պօղոս առաքեալը պարզ ասում է «տա-  
ռը մեռցնում է, իսկ հոգին կենդանաց-  
նում»․ բայց դիտենալ առաքեալի խօսքը  
և Փրկչի կամքը դեռ բաւական չէ. պէտք է  
բարի կամք և սիրտ ունենալ առաքեալի պէս  
մտածելու և զգալու, Քրիստոսի կամքի  
համաձայն ընթանալու համար:

Մինչև այժմ ևս թէ հաւատացողներից  
և թէ չհաւատացողներից շատ շատերը մեկ-  
նում և քննում են Ս. Գրքը միմիայն մեռ-  
ցնող տառին հետևելով յամառաբար. այդ  
տեսակ միամիտ և չարամիտ տառակերների  
մտքի նեղութեան ու սահմանափակութեան  
ֆնատակար հետևանքները անթիւ են: Նորա  
Աստուածային Յայտնութեան կենդանարար  
հոգու կազմակերպուած ներդաշնակութիւնը

խանգարում են մեռցնող տառի խառնու-  
մնդոր նկարագրով, յաւիտենական կեանքի  
խօսքերի տեղ դնում են սքոլաստիկ բարոյա-  
խօսութիւնը: Կրօնը՝ կեանքի այդ կենդանա-  
րար հիմքը, նորա դարձնում են կեանքից  
կտրուած մի դաւանանք և անբովանդակ  
ծիսակատարութիւն. եկեղեցու խորհուրդ-  
ները հասկանում են այնպէս, ինչպէս հին  
ուխտի տառակերները՝ թլփատութիւնը.  
Ս. Գրքն ևս այնպէս են կարգում ու հաս-  
կանում, ինչպէս այն հրէաները, որոնք եր-  
կիւղածութեամբ վերաբերուելով Ս. Գրքի  
տառին, քարկոծ էին անում մարգարէներին  
և խաչ բարձրացնում մարմնացեալ Մեսի-  
ային:

Տառակերներ հաւասարապէս շատ են  
թէ հաւատացեալների և թէ չհատացողների  
մէջ. առաջինները երկրպագում են տառին,  
իսկ վերջինները բժախնդրութեամբ քննա-  
դատում:

Ճշմարիտ հաւատացեալը, նա, ով Պօղոս  
առաքեալի պէս կարող է ասել. «Գիտեմ ումն  
եմ հաւատացել» (Բ. Տիմ. Ա., 12), տառակեր

լինել չի կարող. դա չափազանց հակառակ է Փրկչի վարդապետութեան հոգուն: Հաւատացեալներին տառակեր լինել կարող է միմիայն անունով քրիստոնեան՝ նա, ով քրիստոնեայ է ծնուել և աւանդաբար շարունակում է իրեն այդպէս անուանել, բայց չէ մկրտուած հոգւով և հրով. նա կարող է լինել շատ գիտուն աստուածաբան, նոյն իսկ բարձրաստիճան եկեղեցական, բայց չիմանալ քրիստոնէաբար զգալ և ապրել, և համողուած լինել, որ քրիստոնէութիւնը զոհ և կեռակուր է, և ոչ թէ ողորմութիւն և սէր:

Այդպիսի հաւատը չի կարող կենդանի և բանական լինել, այլ կը լինի բոլորովին մեռեալ և կոյր հաւատ դէպի մեռցնող տառը, որ կեանքի մէջ մտցնում է սպանիչ հոսանք, մթնացնելով կրօնի, Յայտնութեան և եկեղեցու կենսական նշանակութեան հասկացողութիւնը, որ շատերի համար դառնում է օրհասական դայթակղութիւն:

Հրաժարուելով մեռցնող տառի կաշկանդանքից՝ մենք ոչ միայն հնարաւորութիւն ենք ստանում ըմբռնելու Ս. Գրքի

կենդանարար հոգու ներդաշնակ ամբողջութիւնը, այլ և իւրաքանչիւր խօսքի խոր նշանակութիւնը ամբողջի կապակցութեամբ:

Բանական Արարչի էութեան և յատկութեանց ճանաչողութեան լուսով մենք ըմբռնում ենք արարչագործութեան ծրագիրը և նորա վերջնական նպատակները, ըմբռնում ենք մարդու նշանակութիւնն ու արժէքը, երկրաւոր կեանքի խորհուրդը և հոգու յաւիտենական կեանքի վերջնական նպատակը: Այն ամէնը, ինչ որ կեանքի և մեր մէջ հակասական ու անհեթեթ էր թւում, պարզ և հասկանալի է դառնում, խառնովնդորը դառնում է իմաստուն ներդաշնակութիւն և մեր կեանքի իւրաքանչիւր վայրկեանը յաւիտենական խորհուրդ է ստանում, որ իրաւունք է տալիս ապրելու և հնաւորութիւն՝ բանական կեանք վարելու:

Կենդարար հոգին ըմբռնելու հիմք է կազմում Արարիչ Աստուծու, Բարձրագոյն Բանականութեան յատկութեանց ճանաչողութիւնը, որքան այդ մտաչելի է մարդու գիտակցութեանը՝ ծանաչելով Աստուծուն՝ մենք ձեռք

ենը բերում Աստուծոյ կամքի և գոյութեան բացարձակ ճշմարտութիւնը՝ մենք հասնում ենք տիեզերական կեանքի ծրագրի հասկացողութեան, որի համաձայն Արարչի նախախնամութիւնը, գործակցութեամբ Աստուծոյ որդիներին, իրագործում է դարէ ցդար Երկնքի Արքայութիւնը և Նորա յաւիտենական արդարութիւնը. թէպէտ և ըստ պատկերի Աստուծոյ ստեղծուած մարդը ազատ է և կարող է ազատապէս ընտրել Աստուծոյ կամ մամոնայի ծառայութիւնը, ըստ Աստուծոյ կամքի կամ ըստ աշխարհի սովորութեան կեանք վարել, կարող է ինքնակամ և գիտակցօրէն լինել Աստուծոյ կամ սատանայի որդի:

Միմիայն սրտով ըմբռնելով, որ «Աստուած սէր է», մեր թոյլ միտքը սկսում է հասկանալ արարչագործութեան պատճառները, Աստուծոյ արքայութեան իրագործման բանական ծրագիրը և գոյութեան վերջնական նպատակը. սկսում է հասկանալ յաւիտենական հոգումարմնացման, մարդու երկրաւոր կեանքի և վախճանի բանական խորհուրդը. սկսում է հասկանալ թէ երկրաւոր գոյութեան անցու-

ղական երևոյթներին մէջ կայ անանց, յաւիտենական խորհուրդ, որ համապատասխանում է Աստուծոյ արդարութեան յաւիտենական ճշմարտութեան, և թէ ինչպէս պէտք է բանականօրէն ապրել և ինչ եղանակով պէտք է մարդկային կեանքը բանականութեան համաձայն կարգաւորել:

Գոյութեան և մարդու երկրաւոր կեանքի պատճառներն ու նպատակը, արարչագործութեան իմաստուն ծրագիրը և երկրաւոր կեանքի գոյութեան բանական խորհուրդը ի միասին առած կազմում են Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմանտութեան ներդաշնակ ամբողջութիւնը:

Ահա հէնց այս է կենդանարար հոգին, որ մենք պէտք է դուրս բերենք Կեանքի Գրքից, միացնելով և համակերպելով նոյն տեսակ հարցերի վերաբերեալ Ս. Գրքի բոլոր տառերը, մինչև որ կըստացուի Ս. Գրքի աշխարհահայեացքի մի կազմակերպուած ներդաշնակութիւն: Քրիստոսին հաւատացող և ըստ հաւատոյ ապրել ցանկացող անկեղծ քրիստոնեան անշուշտ պէտք է ձգտէ հասկանալ Ս. Գրքի մէջ՝

մեռեալ տառի ներքոյ, թարնուած կենդանարար հոգին: Չի կարելի քրիստոնեայ լինել և Քրիստոսի ճշմարիտ աշակերտ լինելու ճըդտունն չունենալ, պարտաւորական չհամարել այն ամէնը, ինչ որ նա իւր աշակերտներին աւանդեց, գործ չդնել հոգու ամբողջ զօրութիւնը նորա խօսքերից երկնաւոր Հօր կամքը հասկանալու և կատարելու համար:

Ով որ նշանակութիւն է տալիս միմիայն քրիստոնէական ծէսերին, Ս. Գրքի բնագրի տառին, չունենալով նոյն իսկ ազօա գաղափար քրիստոնէական իրէպլի մասին, նա չի կարող ապրել ըստ հաւատոյ, չի կարող Քրիստոսի իսկական հեռեւող լինել:

Այն չհաւատացողը, որ ուզում է վերաբերուել քրիստոնէութեանը որպէս պաշտօնապէս ճանաչուած կեանքի հիմքի, պարտաւոր է պարզել իւր համար քրիստոնէական իրէպլի կենդանարար հոգին, այդ իրէպլի հետ նա պէտք է համեմատէ իրեն յայտնի բոլոր այլ փիլիսոփայական իրէպլները, որպէս զի հնարաւորութիւն ունենայ յառաջադիմութեան օրինական ճանապարհով ընթանալու և մարդ-

կութեանը դէպի բարձր զարգացման աստիճանները առաջնորդելու: Եթէ նա այդպէս չէ վարոււմ, իրաւունք չունի գիտակցական և բանական համարելու իւր վերաբերմունքը դէպի կեանքը և պաշտօնապէս ընդունուած կեանքի հիմքը:

Կեանքի Գրքի ներքին բովանդակութեան անսպառ դանձը երեք գլխաւոր մասերի կարելի է բաժանել: Ամենակալ Աստուծոյ և նորա կամքի ճանաչողութեան կենդանարար հոգին, որ իւր մէջ բովանդակում է քրիստոնէական կազմակերպուած աշխարհահայեացք և ուղիղ պատասխան «ինչ է ճշմարտութիւնը» հարցին: Աստուածամարդու և երկրի վերայ նորա կատարած սուրբ գործի ճանաչողութեան կենդանարար հոգին, որ իւր մէջ պարունակում է մարդկային կեանքի քրիստոնէական բարձրագոյն իրէպլը և ճշգրիտ պատասխան «ինչպէս պէտք է բանականօրէն ապրել» կենսական հարցին: Մարդու և մարդկային կեանքի ճանաչողութեան կենդանարար հոգին, որ իւր մէջ կրում է ինքնաճանաչողութեան հնարաւորութիւնը և «ինչ պէտք է անել» կենսա-

կան հարցի գիտակցական պատասխանը:

Աստուած, Աստուածամարդ և մարդ-  
ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք. քրիս-  
տոնէական աշխարհահայեացք, քրիստոնէա-  
կան իդէալ և ինքնաճանաչութիւն՝ քրիստո-  
նէական բարոյականութեան լուսով—ահա  
կեանքի Գրքի կենդանարար հոգին, որ բո-  
վանդակում է իւր մէջ կատարելապէս որոշ  
պատասխան կեանքի երեք գլխաւոր հար-  
ցերի. «Ի՞նչ է ճշմարտութիւնը», «Ի՞նչպէս  
պէտք է բանական կեանք վարել» և «Ի՞նչ  
պէտք է անել կեանքը բարեփոխելու հա-  
մար»:



Հ.Ս.Խ.Լ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ  
Հ.Ս.Խ.Լ. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА  
7/II-1922  
ԵՐԵՎԱՆ, ԱՍՏԻՂՅԱՆԻ  
Ս. ՄՅԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

« Ազգային գրադարան »



NL0160867

